ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2022, հ. 75, N 3, 63-64
Известия НАН РА, Науки о Земле, 2022, т. 75, N 3, 63-64
Proceedings NAS RA, Earth Sciences, 2022, v. 75, N 3, 63-64

ՎԻԼԵՆ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՂԱՄԱԼՅԱՆ
(ծննդյան 85-ամյակին)

2022թ. լրացավ երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր, վաստակաշատ երկրաբան Վ.Ա. Աղամալյանի 85-ամյակը: Վ.Ա. Աղամալյանը ծնվել է 1937թ. հունվարի 21-ին Երևանում: 1959թ. ավարտում է Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1960թ. մինչ այժմ անփոփոխ աշխատում է ՀԽՍՀ ԳԱ, իսկ հետագայում՝ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում՝ որպես կրտսեր, իսկ այնուհետև՝ պետրոգրաֆիայի բաժնի ավագ և առաջատար գիտաշխատող:

1970թ. Մոսկվայի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի գիտական խորհրդում, պաշտպանել է «Արզաքանի մասիվի մինչքեմբրյան բյուրեղային հիմքի թերթաքարային համալիրի երկրաբանությունը և պետրոլոգիան» թեմայով թեկնածուական ատենախոսությունը: Այս աշխատությունում առաջին անգամ Հայաստանի տարածքի համար առանձնացվել են պրոտերոզոյի հասակի մի շարք շերտախմբեր, և հիմնավորվել է, որ այնտեղ առկա ամֆիբոլիտային ֆացիաժի ապարները ռետրոգրադ փոխակերպման հետևանքով վեր են ածվել կանաչքարային դիաֆտորիտների:

Վ.Ա. Աղամալյանը գիտական գործունեությունը նվիրել է Հայաստանի տարածքի մինչքեմբրյան և մեզոզոյան ժամանակահատվածների երկրաբանական կառուցվածքին առնչվող բարդ և խրթին բազմաբնույթ խնդիրների լուծման և մեկնաբանման հարցերին:

Առանձնապես խոշոր է նրա ավանդը մագմատիզմի, միներալոգիայի, պետրոգրաֆիայի, պետրոքիմիայի, ռեգիոնալ երկրաբանության, երկրաբանական քարտեզագրության, շերտագրության ասպարեզում՝ դիտարկելով խնդիրները սալերի տեկտոնիկայի տեսության համատեքստում: Մասնավորապես, նա կազմել է տարբեր մասշտաբների երկրաբանական քարտեզներ՝ ՀԽՍՀ տարածքի մագմատիզմի և մետամորֆիզմի 1:200 000 (համահեղինակությամբ), Ստեփանավանի շրջանի երկրաբանականխատեսումային ու Ծաղկունյացի բյուրեղային հիմքի երկրաբանապետրոգրաֆիական 1:50000, Նյուվադիի շերտախմբի (հարավային Սյունիք) ու Հախումի բյուրեղային զանգվածի (հյուսիսային Հայաստան) 1:25000, ինչպես նաև Ապարանի սերիայի (կենտրոնական Հայաստան) Միրաք-Թուխմանուկի ոսկու հանքավայրի երկրաբանականխատեսումային 1:10000 մասշտաբների քար-

տեզներ: Վ.Ա. Աղամալյանը պարզել է, որ Մեղրու պլուտոնից անմիջապես հարավ տեղակայված Նյուվադի շերտախմբի մետամորֆային ապարները կոնտակտ-մետամորֆային բնույթի են, այլ ոչ՝ մինչքեմբրյան բյուրեղային զանգվածի ելուստներ, ինչպես ընդունված էր համարել մինչ այդ: Այլ երկրաբանների հետ համատեղ Վայքի վերին կավճի կոնգլոմերատներում Հայաստանի տարածքում առաջին անգամ հայտնաբերել են էգիրինային նորդմարկիտ և տեշենիտ ապարները, իսկ հյուսիսային Հայաստանի վերին յուրայի հասակի նստվածքներից **սպիլիտներ**:

1998թ. Վ.Ա. Աղամալյանը ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնագիտական խորհրդում պաշտպանել է «Հայաստանի բյուրեղային հիմքը» դոկտորական ատենախոսությունը: Առաջին անգամ Հայաստանի, ինչպես նաև ամբողջ կովկասյան տարածաշրջանի մինչքեմբրյան բյուրեղային հիմքի համար առանձնացրել է պրոտերոզոյան հասակի հստակ արտահայտված շերտագրական միավորներ, այն է՝ 2 սերիա՝ Արզականի (միջին պրոտերոզոյ) և Հանքավանի (վերին պրոտերոզոյ), ինչպես նաև 9 շերտախումբ, որոնցից 3-ը՝ միջին պրոտերոզոյի հասակի՝ Բջնու, Սուրբսարգսի, Վանքիձորի, և 6-ը՝ վերին պրոտերոզոյան՝ Բերդիտակի, Հանքավանի, Դալարի, Քասախի, Գհուկի և Աղվերանի: Այդ շերտախմբերը՝ բացի Գհուկինից, իրենց ուրույն տեղն են զբաղեցրել ՀՀ և ԽՍՀՄ տարբեր շերտագրական բառարաններում և այլ գիտական աշխատանքներում՝ այդ թվում Հ. Սարգսյանի կողմից 2013թ. հրատարակած եռալեզու շերտագրական բառարանում: Հասակային առումով ճշգրտել և վերադասակարգել է Ապարանի շերտախումբը՝ այն վերանվանելով սերիա և նրա մեջ առանձնացնելով մի շարք շերտախմբեր:

Առաջին անգամ ամֆիբոլային թերմոբարոմետրիկ հետազոտության միջոցով որոշվել է (համահեղինակությամբ) Քասախի շերտախմբի մետամորֆիզմի ժամանակ ջերմաստիճանային և ճնշման ցուցանիշները: Այդ շերտախմբում առաջինն է բացահայտել մինչքեմբրյան օֆիոլիտներ, որոշել նրանց երկրաքիմիական բնույթը: Վ.Ա. Աղամալյանը առաջինն է, որ ամբողջ Անդրկովկասի օֆիոլիտային գոտու համար Բազումի հորստի Սառն Աղբյուր տեղամասից հայտնաբերել է գլաուկոֆանային կամ երկնագույն թերթաքարեր՝ թվագրելով դրանք ստորին կոնյակի հասակով:

Վերջին տարիներին գիտնականը աշխատում է ինստիտուտի Գեոդինամիկայի և երկրաբանակն վտանգների լաբորատորիայում և զբաղվում է ՀՀ տարածքի երկրակեղևի առաջացման մոբիլիստական մոդելի մշակման հարցերով, որի հիման վրա նորովի առանձնացրել է ՀՀ տարածքի հիմնական տեկտոնական միավորները: Հեղինակ և համահեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատությունների՝ այդ թվում 10 մենագրության և 13 ձեռագիր հաշվետվության:

Հայկ Մելիք-Աղամյան